

APAGA

Quarterly

ԱՊԱԳԱ

فصلنامه

فصلنامه فرهنگی - اجتماعی مطالعات شرق شناسی ، ایرانشناسی و ارمنی شناسی
An International Journal of Oriental Studies



ISSN 1682-5438

شماره ۷۵ پاییز (آذر) ۱۳۹۷
No. 75, Դեկտեմբեր 2018


ԱՊԱԳԱ

Հանդես

APAGA

Quarterly

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական եռամսյա հանդես
An International Journal of Oriental Studies



Armenia - Urartu

ISSN 1682-5438

Համար 75 Դեկտեմբեր , 2018 թ.

No. 75, Decemberr 2018

ԱՊԱԳԱ No. Համար 75, 2018 APAGA

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական միջազգային եռամսյա հանդես
An international Quarterly Journal of Oriental studies

Արտոնատեր, Հրատարակիչ եւ Գլխավոր խմբագիր
License-holder, Publisher & Editor-in-Chief
Էդ. Բաղդասարյան / Ed. Baghdasarian,

Փոստարկղ համար 15875-9488 Թեհրան-իրան
POBOX No. 15875-9488 Tehran – Iran

WEB: www.ApagaOnline.com and www.apagamonthly.4t.com
E-mail: apaga98@hotmail.com ISSN 1682-5438

Բովանդակություն

Հայերեն Թուրմենչայի պայմանագիրը

Անգլերեն Ակնարկ Հայաստանի պատմական աշխարհագրության-2

Պարսկերեն Իրանը և նրանից բաժանված տարածքները-1

CONTENTS

Armenian Turmenchay treaty

English Historical overview of the Armenian geography-2.

Persian Iranian Territories devided

- Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:
- Արտատպության դեպքում հղումը «Ապագա»-ին պարտադիր է:
- Ստացված հոդվածները չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Subscriptions: \$ 20 per year

Գինը 5000 ռիալ

آپاگا فصلنامه بین المللی ایرانشناسی و ارمنی شناسی

شماره 75 پاییز 1397

صاحب امتیاز و مدیر مسئول

ادیک باغداساریان

صندوق پستی شماره ۱۵۸۷۵-۹۴۸۸

تهران - ایران

نشانی اینترنت www.ApagaOnline.com و www.apagamonthly.4t.com

apaga98@hotmail.com

پست الکترونیکی

ISSN 1682-5438

فهرست

فارسی سرزمین های جدا شده از ایران - ۱

ارمنی قرارداد ترکمنچای

انگلیسی نگاهی بر تاریخ جغرافیاشناسی ارمنی- ۲

مقالات و دیدگاه های مندرج در نشریه لزوماً «بیانگر موضع «آپاگا» نیست.

نشریه در حک و اصلاح مقاله ها مجاز است.

مقالات و مطالب رسیده باز گردانده نمی شود.

استفاده از مطالب «آپاگا» با ذکر ماخذ آزاد است.

شمارگان ۱۰۰ بها ۱۰۰۰۰ تومان

چاپ احسان-تهران چهارراه ولیعصر پلاک ۱۱۴۸

Բարև Երևանից.

Սիրելի Էդիկ 2018թ. փետրվարի 10-ին լսանում է Թուրքմենչայի պայմանագրի 190-ամյակը: Որոշեցի ստեղծված լռությունը խախտել և գրել այդ մասին: Այժմ ուղարկում եմ Ձեզ, եթե հարկ կհամարեք, ապա ուրախ կլինեմ, եթե դա տեղադրեք Ձեր հանդեսում

ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԹՈՒՐՔՄԵՆՉԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ 190-ԱՄՅԱԿԸ

ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

**Պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
07.03.2018
Երևան**

2018թ. փետրվարի 10-ին լրանում է Ռուսաստանի և Պարսկաստանի միջև ստորագրված Թուրքմենչայի պայմանագրի 190-ամյակը:

Թուրքմենչայի պայմանագիրը բախտորոշ նշանակություն է ունեցել հայ ժողովրդի պատմության մեջ:

Նշելով 1826-1828թթ. ռուս-պարսկական երկրորդ պատերազմի արդյունքով կնքված Թուրքմենչայի պատմական պայմանագրի 190-րդ տարեդարձը, կարևոր եմ համարում նախ, շատ համառոտ ներկայացնել մինչ այդ տեղի ունեցած իրադարձությունները:

1. ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՆ ԵՎ ԹՈՒՐՔՄԵՆՉԱՅԻ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԱՆԳՈՒՓՐԱՆՍԻԱԿԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսաստանի կայսրուհի Եկատերինա Երկրորդի մղած պատերազմների արդյունքով Ռուսաստանն ընդհուպ մոտեցել է Անդրկովկասին:

Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելու հայերի հույսերն ավելի են ամրապնդվել, երբ 1801 թ. ռուսական զորքերը մտել են Վրաստան և սեպտեմբերի 12-ին ցարի մանիֆեստով Վրաստանը միացվել է Ռուսաստանին: Այս մանիֆեստով էլ Ռուսաստանին են միացվել Նաև Լոռին, Փամբակը, Շամշադինը և Հայաստանի հյուսիս-արևելյան մի քանի այլ շրջաններ:

Բայց այս միացման հետևանքով սրվել են մի կողմից Թուրքիայի ու Պարսկաստանի, մյուս կողմից Ֆրանսիայի ու Անգլիայի հետ Ռուսաստանի հարաբերությունները:

Պարսկաստանն ու Թուրքիան հասկանում էին Ռուսաստանից

Եկող վտանգը և ձգտում էին նրան դուրս մղել Անդրկովկասից: Դրանով շահագրգռված էին Անգլիան ու Ֆրանսիան:

1802 թ. հունիսի 26-ին Նապոլեոն Բոնապարտի նախաձեռնությամբ կնքվել է թուրք-ֆրանսիական պայմանագիր, որն ուղղված էր Ռուսաստանի դեմ: Միաժամանակ ֆրանսիական զործակալները Բոնապարտի հանձնարարությամբ Պարսկաստանի շահին հավաստիացնում էին Անդրկովկասից Ռուսաստանին դուրս մղելու գործում Ֆրանսիայի աջակցության մասին:

Իսկ Ռուսաստանն էլ առիթ էր որոնում Երևանի ու Նախիջևանի խանությունները գրավելու համար: Շուտով ստեղծվել է այդ առիթը: 1801 թ. Թիֆլիսում մահացած Յովսեփ Արղուլյան կաթողիկոսի գահին տիրանալու համար Էջմիածնում սկսվել էր սուր պայքար:

Երևանի խանի հովանավորությամբ 1802 թ. մայիսի 25-ին կաթողիկոս էր ընտրվել Դավիթը: Նույն օրերին կաթողիկոս էր ընտրվել նաև Դանիելը, որին պաշտպանող ռուսական զորքերի հրամանատար, իշխան Ցիցիանովը խանից պահանջել էր նրան ճանաչել կաթողիկոս:

Երբ խանը մերժել է այդ պահանջը, Ցիցիանովը, օգտագործելով այդ առիթը, 1804 թ. գարնանը սկսել է արշավանք Երևանի ուղղությամբ: Սկսվել է ռուս-պարսկական պատերազմը, որն ավարտվել է 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով:

Այդ պատերազմի ժամանակ մեծապես սրվել էին Ֆրանսիայի ու Ռուսաստանի հարաբերությունները: Նապոլեոն Բոնապարտը ձգտում էր Ռուսաստանին գամել պարսկական պատերազմին: Այդ նպատակով էլ 1806 թ. Նապոլեոնը Պարսկաստանի շահի հետ նախնական համաձայնության է եկել ռազմական դաշինք կնքելու մասին:

Նապոլեոնի հակառուսական քաղաքականությունը համընկնում էր Թուրքիայի և Պարսկաստանի շահերին: Դրանից էլ ելնելով, Նապոլեոնը ոգևորում էր Թուրքիանին պատերազմ սկսել Ռուսաստանի դեմ, որն արդեն կռվում էր Պարսկաստանի դեմ:

Նապոլեոնը նույնիսկ քայլեր է ձեռնարկել Պարսկաստանին ու Թուրքիային հաշտեցնել և Անդրկովկասում միասնական ճակատ ստեղծել Ռուսաստանի դեմ:

Թուրքիան այնքան էր ոգևորվել, որ միակողմանի խախտելով 1791 թ. կնված պայմանագիրը, արգելել է ռուսական ռազմանավերի մուտքը Բոսֆորի ու Դարդանեյի նեղուցներով և ուժեր է կենտրոնացրել Դանուբ և Ախուրյան գետերի ափերին:

Վստահ իր ուժերի վրա, ունենալով Ֆրանսիայի աջակցությունը, Թուրքիան 1806 թ. դեկտեմբերի 18-ին պաշտոնապես պատերազմ է հայտարարել Ռուսաստանին: Սկսվել է 19-րդ

դարում ռուս-թուրքական առաջին պատերազմը, որն ավարտվել է 1812 թվականին:

Ռուսաստանը երկու ճակատով պատերազմելու հնարավորություն չուներ և գեներալ Գուրդովիչը սկսել է պարսիկների հետ բանակցել ռազմական գործողություններն ավարտելու շուրջ: Իսկ դա չէր մտնում Նապոլեոնի ծրագրերի մեջ:

Եվ այդ հաշտության բանակցությունները ձախողելու նպատակով 1807 թ. մայիսի 4-ին Ֆրանսիայի ու Պարսկաստանի միջև ֆինկեյնշտենում կնքվել է ֆրանս-պարսկական դաշինք, որով Նապոլեոնը խոստացել է օգնել Վրաստանից ու Անդրկովկասից հեռացնել ռուսներին:

Հարկ չեմ համարում անդրադառնալ ծավալված ռազմական գործողություններին, միայն կամենում եմ նշել, որ պարսկական ուժերի դեմ ռուսական զորքերի տարած հաղթանակները ձախողել են պարսկա-թուրքական դաշինք ստեղծելուն ուղղված Նապոլեոնի դիվանագիտական փորձերը:

Անգլիան, որն ուշադրությամբ հետևում էր Անդրկովկասում տեղի ունեցող գործողություններին, նույնպես ձգտում էր ամրապնդել իր դիրքերը: Եվ երբ Տիլզիտում հաշտություն էր կնքվել Նապոլեոնի և Ռուսաստանի ցար Ալեքսանդր Առաջինի միջև, Անգլիան շտապել է դրանից օգտվել և միջոցների է դիմել Թուրքիայում ու Պարսկաստանում իր ազդեցությունն ուժեղացնել համար:

Հենց այդ նպատակով էլ 1809 թ. կնքվել է անգլո-թուրքական հաշտության և բարեկամության պայմանագիր: Նույն թվականին կնքվել է անգլո-պարսկական դաշնակցային նախնական պայմանագիր, որով Անգլիան խոստացել է ընդդեմ Ռուսաստանի՝ ցույց տալ ֆինանսական ու ռազմական օգնություն:

Այդ պայմանագրերի հետևանքով Թուրքիան խախտել է 1807 թ. օգոստոսին կնքված զինադադարը և 1809 թ. վերսկսել է Ռուսաստանի դեմ ռազմական գործողությունները: Պարսիկները ևս 1809 թ. ամռանն ակտիվացրել են իրենց գործողությունները, Անգլիայից ստանալով 12 հազար հրացան, 22 թնդանոթ և այլն:

Մի շարք պարտություններից հետո Թուրքիան հարկադրված էր խնդրել հաշտություն: 1812 թ. մայիսի 16-ին Բուխարեստում ստորագրվել ռուս-թուրքական հաշտության պայմանագիր, որով Կովկասում երկու տերությունների միջև որպես սահման ընդունվել է Ախուրյան գետը: Ախալքալակը զիջվել է Թուրքիային: Պայմանագրով Թուրքիան չէր կարող միանալ Ֆրանսիային:

1913 թ. հոկտեմբերի 12-ին Գյուլիստանում կնքված հաշտության

պայմանագրով ավարտվել է ռուս-պարսկական պատերազմը: Պարսկաստանը ճանաչել է Վրաստանի, Դաղստանի, Գյանջայի, Շաքիի, Շիրվանի, Դերբենդի, Ղուբայի, Բաքվի, Թալիշի խանությունների, Լոռու, Փամբակի, Շամշադիի, Չանգեզուրի և Շորապյալի գավառների միացումը Ռուսաստանին: Սրանով դրվել է Ռուսաստանին հայկական հողերը միացնելու սկիզբը:

Իհարկե, Թուրքիան ու Պարսկաստանը հարկադրված էին ստորագրել պայմանագրերը և առիթ էին փնտրում վերականգնել կորցրած տարածքները: Իսկ դա հնարավոր էր միայն Ռուսաստանի հետ նոր պատերազմով:

Այստեղ ուզում եմ նկատել հետևյալը: Եվրոպական տերությունները, առանձնապես Անգլիան ու Ֆրանսիան գիտեին Պարսկաստանի և Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայ ժողովրդի տառապանքի մասին:

Նրանք գիտեին պարսկա-թուրքական բռնություններից փրկվելու համար եվրոպական տերություններից և Յոնի պապից օգնություն ստանալու հույսն արտահայտող հայ ժողովրդի ազատագրական շարժման գործիչների բազմաթիվ խնդրագրերի մասին:

Նրանք գիտեին նաև, թե Հայաստանին մոտեցող ռուսական զորքերին հայերն ինչպիսի ջերմությամբ էին ընդունում, նրանց համարելով իրենց ազատարարներ:

Գիտեին, բայց տարօրինակն այն էր, որ այդ ամենը գիտենալով հանդերձ, մոռացել էին հայերին ազատագրելու մասին տված խոստումները և, հիմա, երբ այդ ազատագրումը կատարվում էր ռուսական բանակի միջոցով, հանդես էին գալիս Պարսկաստանի և Թուրքիայի պաշտպանությամբ:

Արևմտյան տերություններն այդպիսի քաղաքականություն են վարել նաև 1826-1828 և 1828-1829 թթ. տեղի ունեցած ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ժամանակ; Ասվածի կապակցությամբ հարկ եմ համարում ընթերցողի ուշադրությանը ներկայացնել շատ փաստերից միայն մեկը:

Ինչպես արդեն նշվել է, Պարսկաստանը չէր հաշտվում Գյուլիստանի պայմանագրի հետ և միջոցներ էր որոնում կորցրած տարածքները ետ վերադարձնելու համար: Այս գործում պարսից շահի եռանդուն խորհրդատուները և ռազմական օգնություն ցույց տվողները Ֆրանսիան էր ու հատկապես Անգլիան: Թեև նրանց մեջ քիչ չէին հակասությունները, բայց միավորվել էին Ռուսաստանին Անդրկովկասից դուրս մղելու համար, օգտագործելով Պարսկաստանի ուժը:

1825 թ. դեկտեմբերի 14-ին Պետերբուրգում նոր ցար դարձած Նիկոլայ Առաջինի դեմ սկսվել էր դեկաբրիստների ապստամբությունը: Մայրաքաղաքում տիրում էր

խառնաշփոթություն: Առաջին նշաններից երևում էր, որ դեկաբրիստների շարժումը կարող էր ծանր հետևանքներ ունենալ Ռուսաստանի ապագայի համար:

Ապստամբության օրը Պետերբուրգում էր գտնվում Պարսկաստան վերադարձող անգլիացի գնդապետ Շիլը, որը մտերիմ կապեր ուներ պարսից թագաժառանգ, Ռուսաստանի ռիտերիմ թշնամի Աբբաս-Միրզայի հետ:

Անգլիացի գնդապետը մտադրություն ուներ մի քանի օր մնալ Պետերբուրգում: Բայց նա այնքան էր համոզված ապստամբության հաջողության մեջ, որ հենց նույն օրը, դեկտեմբերի 14-ին, չսպասելով իմանալու, թե ինչով է ավարտվելու խռովությունը, շտապ մեկնել է Պարսկաստան, օր առաջ Աբբաս-Միրզային հայտնելու այդ ուրախալի լուրը, որից անհապաղ պետք էր օգտվել ու վերականգնել կորցրածը:

Շիլը Թավրիզ է հասել երեք ամիս անց և Աբբաս-Միրզային հայտնել է ուրախալի լուրը, նրան հորդորելով այլևս չսպասել և անմիջապես հարձակվել Անդրկովկասում գտնվող ռուսական զորքերի դեմ:

2. ՆԵՐՍԵՆ ԱՃՏԱՐԱԿԵՑՈՒ ԴԻՄՈՒՄԸ

Գնդապետ Շիլի բերած լուրից ոգևորված Աբբաս-Միրզան 1826 թ. հուլիսի 16-ին Ռուսաստանի դեմ սկսել է ռազմական գործողություններ, որոնց մասին հարկ չէմ համարում խոսել:

Պարսկական զորքերի հարձակումից հետո, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին անմիջապես անցել է գործի: Նա հասկացել էր, թե այդ պատերազմում ինչ ճակատագրական նշանակություն կունենար հայերի համար Ռուսաստանի հաղթանակը և իր ամբողջ ուժերը տրամադրել է դրան:

1826 թ. հուլիսի 29-ին, պատերազմը սկսելուց երկու շաբաթ անց, նախապատրաստական աշխատանք տանելուց հետո, Ներսես Աշտարակեցին կոչով դիմել է Կովկասի հայությանը:

Հայերեն և ռուսերեն գրված այդ կոչում ասվում էր. «Աստուծուց ինձ վրայ դրուած սրբազան պարտաւորութեամբ յայտարարում եմ ահա, որ ինչպէս դուք էլ տեղեակ էք մեր ազգային պատմութիւնից, գիտե՞ք, թէ ինչ պատճառներով վերացան մեր ազգի գերազանցութիւնը, թագաւորութիւնը, իշխանութիւնը, մեծութիւնը, յարգանքները, հպարտութիւնը և կամ թէ, վերջապէս, ինչից առաջացավ մեր սիրելի հայրենիքի վերջնական անկումը և ովքեր էին ընդհանուրիս այդ դժբախտութիւնների պատճառները:

Այնուհետև, Ներսես Աշտարակեցին նշել է Հայաստանի թշվառ վիճակի, պանդխտության, գերության սարսափելի

հետևանքների մասին և կոչ է արել, Մի վախեք պարսից ծայկից և աղաղակներից: Նրանց բոլոր ուժերը ճիչի ու սպառնալիքների մեջ է և ոչ թե ճշմարիտ զօրութեան և խելացիութեան: Եւ որովհետև նրանց ճիչն ու աղաղակը ընդհանրապես թնկացնելով օդը, շուտով կորչում են, այնպես էլ ունայն են նրանց բոլոր գոռում-գոչումը և սպառնալիքները:

Ներսես Աշտարակեցին հիշեցրել է մեր նախնեաց սիրագործութիւնները և հույս է հայտնել, որ միաբանութամբ պիտի քաջալերեք միմիանց, ասելով՝ մեռնենք քաջութեամբ և առանց հայրենիքին դավաճանելու և այսպիսով ժառանգենք մեր նախնիների պանծալի անունն ու փառքը:

Ներսես Աշտարակեցին շարունակել է. «Թող չվախեցնեն ձեզ պարսից ընդհանրապես արշավանքները, աւագակութիւնները և այն սուտ լուրերը, որ տարածում են նրանք կամ նրանցից խաբուած թէթեւամիտները: Մի՛ տարակուսեք, մի՛ վիատուեք և մի՛ դողացեք, որովհետև քաջ յայտնի են մեզ պարսիկների յատկութիւնները եւ նրանց խորամանկութեամբ հնարած լուրերի ստորութիւնը:

Հայրությանն ուղղված իր կոչը Ներսես Աշտարակեցին ավարտել է հետևյալ խոսքերով. «Գոցեցէ՛ք ձեր ականջները և ձեր դէմքը այդպիսի կեղծ համբանների դէմ, բոցավառուեցեք արիութեան ոգով, դիմադրեցեք մեր թշնամիների բոլոր խորամանկութիւններին և աւագակութիւններին...»

Դիմադրեցեք թշնամուն և նրա արբանյակներին կամ ռուսաց զօրքի հետ միասին և կամ թե մի ուրիշ կերպով, որ աւելի յարմար կը լինի ներկայ աւագակային յարձակումների միջոցին, իսկ եթէ հարկ լինի՝ մի ինչպէք ձեր արյան վերջին կաթիլը (**Վլադիմիր Պետրոսեան**, Արարող պետք է մնայ Երեւանի կողմը, Պէյրուբ, 2001, 64-65):

Ներսես Աշտարակեցու կոչը մեծ արձագանք է գտել: Ամենուրեք հայերը ոտքի են կանգնել պարսկական դարավոր լուծը խորտակելու համար:

Թիֆլիսում կազմակերպվել է հայ կամավորների գունդը՝ իր կանոնադրությամբ ու հայոց պետականության խորհրդանիշ Ծիրանագույն դրոշով: Գունդը Ներսես Աշտարակեցու առաջնորդությամբ մեկնել է պատերազմի դաշտ:

Ղազախի և Շամշադինի շրջաններում էլ կազմակերպվել էր մեկ այլ գունդ՝ եպիսկոպոս Գրիգոր Մանուչարյանի հրամանատարությամբ:

Եսայի կաթողիկոսի և Դավիթ Բեկի ժամանակներից անցել էր մեկ դար: Այդ տևական ընդմիջումից հետո, հենց որ ռուսական զորքերը մոտեցել են Հայաստանի սահմաններին, հայ մարդը նորից համարձակություն է ունեցել զենք վերցնել, միանալ

ռուսական գորքերին և կռվել իր հայրենիքի ազատագրության համար:

Բայց դա բոլորը չէր: Տեղի էր ունեցել մեկ այլ զարմանալի երևույթ: Ժողովուրդը միշտ հայ հոգևորականներին ճանաչել է որպես հնազանդության քարոզիչներ, բայց այս անգամ, ի դեմս Ներսես Աշտարակեցու և Գրիգոր Մանուչարյանի, ժողովուրդը տեսել է սուրը ձեռքին հայրենիքի ազատության համար մարտնչող մարտիկների...

3. ԵՐԵՎԱՆԻ ԲԵՐՂԻ ԳՐԱՎՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Հարկ չեմ համարում անդրադառնալ 1826-1828 թթ. տեղի ունեցած ռազմական գործողություններին, բայց միայն ուզում եմ ընթերցողի ուշադրությանը ներկայացնել, թե այդ պատերազմի ընթացքում, 1827 թ. հոկտեմբերի 1-ին, ռուսական գորքերի և հայ կամավորների կողմից Երևանի բերդի գրավումը ինչ է նշանակել հայերի համար:

Իրադարձությունների ժամանակակից հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը գրել է հետևյալը. «Դժոխքի քանդվիլը մեղավորների համար էս գինը չէր ունենալ, ինչպես Երևանու բերդի առնիլը հայերի համար...: Զանի Հայաստան իր փառքը կորցրել էր, քանի հայք իրանց գլուխն էին թրի տեղ թշնամու ձեռք քցել. էս օրը, էս ուրախությունը չէին տեսել, չէին վայելել: Երևանի գրավումը Հարություն Ալամդարյանը գնահատել է որպես «Հայաստան աշխարհի փրկությունն անգութ պարսիկների երկաթն հնոցից»:

Իսկ հեռավոր Հնդկաստանից Մեսրոպ Թադիադյանը գրել է. «Աչքներդ լոյս, որ մեր քաղցր աշխարհքն պարսից դառը չարչարանքներից ազատվեց»:

Երևանի գրավմանը մասնակցած դեկաբրիստ Ե. Լաչինովը թողել է հետևյալ վկայությունը. «Հուզիչ է ազատագրված հայերի հրճվանքը: Սրտից է բխում նրանց արտահայտած ուրախությունը: Նրանք իրենց երկիրը հարսանքատան են նմանեցնում, որտեղ հիմա ամեն ինչ ցնցում է»:

Այսպիսին է եղել ժամանակակիցների վկայությունը: Եվ մենք պարտավոր ենք այդ իրադարձություններին նայել հենց նրանց, ժամանակակիցների աչքերով:

Կարևոր եմ համարում ներկայացնել նաև Հովհաննես Թումանյանի գնահատականը. «Հայ ժողովուրդն ազատվում էր մի դժոխքից, որ նրա համար ստեղծել էր պարսկական կոպիտ ու խավար բռնակալությունը, որի վայրագությունը ոչ մի սահման ու չափ չէր ճանաչում, ոչ օրենք, ոչ իրավունք, ոչ խնդիր, ոչ աղաչանք, ոչ կրոն, ոչ սրբություն, ոչ կայք, ոչ կյանք, ոչ կին, ոչ պատիվ, ոչ ամոթ, ոչ խղճմտանք...Եվ այդ դժոխքի միջնաբերդը

Երևանն էր:

- Երևանի առումով,- շարունակել է մեծ հայրենասեր բանաստեղծը,- Ռուսաստանին միացավ Մասիսի Էս կողմը գտնվող հայությունը ու Էդ օրվանից հայ ժողովրդի կյանքի ու պատմության մեջ բացվեց մի նոր շրջան: Կատարվեց Կովկասի հայության դարավոր տենչանքը:

4. ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

1827 թ. հոկտեմբերի 6-ին գեներալ Պասկևիչի հրամանով կազմվել է Երևանի ժամանակավոր վարչություն և ներսես Աշտարակեցու, գեներալներ Բորոդինի և Կրասովսկու մասնակցությամբ:

Ժամանակավոր վարչության առջև դրված խնդիրներից էին.

1. Կարգ ու կանոնի հաստատում:
2. Երկրի սահմանների, ինչպես նաև Երևանի, Սարաղարապատի և Աբբասապատի բերդերի պաշտպանություն:
3. Ճանապարհների անվտանգության ապահովում:

Մեկ հազարից ավելի հայ կամավոր զինվորներ ռուսական զորամասերի հետ ձեռնամուխ են եղել երկրի սահմանների պաշտպանությանը:

Սա նոր երևույթ էր մեր ժողովրդի պատմության մեջ: Հայ-ռուսական ռազմական համագործակցությունը շարունակվում էր նաև պատերազմից հետո:

5. ԹՈՒՐԵՄԵՆՉԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Ռուս-պարսկական պատերազմում Ռուսաստանի տարած հաղթանակն ավարտվել է 1828 թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայում կնքված հաշտության պայմանագրով, որը ստորագրել են Ռուսաստանի կողմից գեներալ-թիկնապահ, Կովկասի առանձին կորպուսի հրամանատար Իվան Պասկևիչը և Պարսկաստանի կողմից՝ թագաժառանգ Աբբաս-Միրզան:

Պետք է նշել, որ միջազգային դիվանագիտության պատմության մեջ այս պայմանագիրը հայտնի է նրանով, որ երբեք չի խախտվել:

Պայմանագրի 1-ին հոդվածում նշվում էր, որ ,ռուսաց կայսրի և պարսից շահի, նրանց թագաժառանգների և հաջորդների, նրանց տերությունների և երկու կողմերի հպատակների միջև հետ այսու առհավետ թագավորելու Է խաղաղություն, բարեկամություն և կատարյալ համաձայնություն:

2-րդ հոդվածով կողմերը համաձայնվել են Գյուլիստանի պայմանագիրը փոխարինել նոր պայմանագրի պայմաններով ու

որոշումներով:

3-րդ հոդվածով ,Պարսկական շահն իր անունից և իր թագաժառանգների և ժառանգորդների անունից ռուսական կայսրությանն է զիջում որպես նրա կատարյալ սեփականությունը Երևանի խանությունը՝ Արաքսի այս և այն կողմերում և Նախիջևանի խանությունը:

4-րդ հոդվածով որոշվել է երկու տերությունների միջև սահմանգիծը:

5-րդ հոդվածով ,Պարսկական շահն իր անունից և իր թագաժառանգների և հաջորդների անունից հանդիսավոր կերպով ընդունում է, որ վերը նշված սահմանագծի և Կովկասյան լեռների ու Կասպից ծովի միջև ընկած բոլոր հողերն ու բոլոր կղզիները, ինչպես և այդ երկրներում ապրող բոլոր քոչվոր և մյուս ժողովուրդներն առհավետ պատկանում են ռուսական կայսրությանը:

6-րդ հոդվածով Պարսկաստանը պարտավորվել է ,պատերազմի պատճառով ռուսական կայսրությանը պատճառած զգալի վնասները, ինչպես նաև ռուսահպատակների կրած կորուստներն ու վնասները փոխհատուցել դրամական վարձատրությամբ... քսան միլիոն ռուբլի արծաթով:

7-րդ հոդվածով պարսից շահի ցանկությանն ընդառաջելով, Ռուսաստանը Աբբաս-Միրզային ճանաչել է որպես պարսկական գահի հաջորդ, ,իսկ նրա՝ գահ բարձրանալուց հետո, նրան ճանաչել որպես պարսից տերության օրինական թագավոր:

8-րդ հոդվածով ռուսական առևտրական նավերն ազատ նավարկելու իրավունք ունեն Կասպից ծովում, իսկ Պարսկաստանն էլ պարտավորվել է նրանց ցույց տալ ամեն օգնություն: Նույնպիսի պարտավորությունն ստանձնել է Ռուսաստանը պարսկական առևտրական նավերի համար:

Իսկ ռազմանավերի վերաբերյալ նշվել է հետևյալը. ,Զանի որ շատ հնուց միայն ռուսական ռազմական դրոշ կրող նավերը կարող էին նավարկել Կասպից ծովում, ապա այս պատճառով նրանց այսօր ևս տրվում է և հաստատվում նախկին բացառիկ իրավունքն այն առումով, որ բացի Ռուսաստանից ոչ մի այլ տերությունն չի կարող ռազմական նավեր ունենալ Կասպից ծովում:

9 և 10-րդ հոդվածները վերաբերել են դեսպանությունների գործունեությանը, առևտրական հարաբերությունների ծավալմանը և այլն:

11-րդ հոդվածով վերականգնվել են երկու կողմերի հպատակների բոլոր պահանջները և բավարարվելու էին կառավարության գանձարանում եղած պարտքերը:

12-րդ հոդվածով պայմանավորվող կողմերը համաձայնվել են

Արաքս գետի երկու կողմերում անշարժ գույք ունեցող հպատակներին տալ ,եռամյա պայմանաժամ, որի ընթացում նրանք կարող են ազատ վաճառել կամ փոխանակել իրենց անշարժ գույքը:

Միաժամանակ ռուսական կողմի պահանջով նշվել է, որ սույն հոդվածը չի տարածվում Երևանի նախկին խանի, Նրա եղբոր և Նախիջևանի նախկին կառավարիչի վրա:

13-րդ հոդվածով պատերազմի ժամանակ գերի ընկած հպատակները չորս ամսվա ընթացքում ազատվելու էին և վերադարձվելու էին: Ազատված գերիներն ուղարկվելու էին Աբբաս-Արագ, որտեղ հանձնվելու էին երկու կողմերի կոմիսարներին:

Վերջիներս կարգավորելու էին ազատվածներին իրենց բնակության վայր ուղարկելու գործը: Նույնը վերաբերում էր նաև ռազմագերիներին:

14-րդ հոդվածով պայմանավորվող կողմերից ոչ մեկը ,չի պահանջի հանձնել այն փախստականներին և դասալիքներին, որոնք մյուս կողմի հպատակությունն ընդունել են մինչև վերջին պատերազմի սկսվելը կամ այդ պատերազմի ժամանակ:

Հոդվածում հատուկ կերպով ընդգծվել է, որ պայմանավորվող կողմերը որոշել են . Երկու կողմերի հպատակները, որոնք մեկ պետությունից անցել են կամ առաջիկայում կանցնեն մյուս պետությունը, կարող են բնակություն հաստատել և ապրել այն բոլոր վայրերում, ուր թույլ կտա այն կառավարությունը, որի իշխանության ներքո նրանք կգտնվեն:

15-րդ հոդվածում նշվում էր, որ Պարսկաստանի շահի կողմից ,Ադրբեջան կոչվող մարզի բոլոր բնակիչներին և աստիճանավորներին շնորհվում է բացարձակ և կատարյալ ներում: Նրանցից ոչ ոք, ինչ աստիճանակարգի էլ պատկանի, չի կարող պատերազմի կամ ռուսական զորքերի կողմից հիշյալ մարզերի ժամանակավոր գրավման ընթացքում իր արտահայտած կարծիների, արարմունքների կամ վարքի համար ենթարկվել հետապնդման, ինչպես նաև վիրավորանքի:

Բացի դրանից, այդ աստիճանավորներին և բնակիչներին կտրվի, այսօրվանից հաշված, միամյա ժամանակամիջոց, որպեսզի նրանք իրենց ընտանիքներով հանդերձ կարողանան պարսկական մարզից ազատ անցնել ռուսական մարզերը, որպեսզի կարողանան դուրս կրել և վաճառել իրենց շարժական գույքը, առանց հանդիպելու կառավարության կամ տեղական իշխանությունների կողմից հարուցված արևե արգելքի:

Այդ անձանց կողմից վաճառվող կամ դուրս տարվող գույքն ու իրերը չպետք է ենթարկվեն որևէ մաքսի կամ հարկի: Իսկ անշարժ գույքի նկատմամբ սահմանվում է հնգամյա

Ժամանակամիջոց՝ այն վաճառելու կամ նրա վերաբերյալ կամայական կարգադրություն անելու համար:

Այս ներումը, սակայն, չի տարածվում այն անձանց վրա, որոնք մինչև միամյա ժամանակամիջոցը լրանալը կգործեն դատական պարտքի ենթակա որևէ հանցանք կամ ոճիրե(**Յայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում(1828-1923)**),պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 65-72):

Թուրքմենչայի պայմանագիրը հայ ժողովրդի արևելյան հատվածին հնարավորություն է տվել ազատագրվել պարսկական տիրապետության ծանր լծից և իր հետագա ճակատագիրը կապել Ռուսաստանի ու ռուս ժողովրդի հետ:

Այդ պայմանագրի 15-րդ հոդվածի հիման վրա Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող հայերին իրավունք է տվել գաղթել արդեն Ռուսաստանին միացված Արևելյան Յայաստան: Այդ իրավունքն առաջին հերթին տարածվել է Ատրպատականի այն տարածքների վրա, որտեղից հեռանալու էին ռուսական զորքերը:

Սկսվել է մեծ գաղթ: Արևելյան Յայաստան գաղթողները դրա մեջ տեսնում էին իրենց փրկությունը:

Գաղթի կազմակերպմամբ զբաղվել է Երևանի ժամանակավոր վարչության կից 1828 թ. փետրվարին ստեղծված ներգաղթի կոմիտեն:

1828-1829 թթ. Ատրպատականից Արևելյան Յայաստան է գաղթել 8245 ընտանիք՝ 45 հազար մարդով: Նրանք բնակություն են հաստատել Երևանում, Նախիջևանում, Օրդուբադում, Չանգիբասարում, Կարբիբասարում, Ապարանում և այլ վայրերում:

Վերոհիշյալ Երևանի ժամանակավոր վարչությունը գոյություն է ունեցել վեց ամիս: Անհրաժեշտ էր ստեղծել իշխանության նոր մարմին, որին Նիկոլայ Առաջինի հրամանով ձեռնամուխ է եղել այդ նպատակի համար ստեղծված հատուկ կոմիտեն:

Ի՞նչ մարմին պետք է ստեղծվեր: Ի՞նչ վարչական կառուցվածք պետք է լիներ:

Պարսկա-թուրքական իշխանությունները գործածությունից հանել էին ,Յայաստանե անվանումը: ,Յայաստանե անվանումը մոռացության էր տրվել: Յատուկ կոմիտեի անդամներից ոմանք գտնում էին պահպանել վարչական նախկին անվանումները:

Թուրքմենչայի բանակցությունների ժամանակ Յովսեփ Արղությանի թոռ Կոստանտին Արղությանը պապի թղթերի մեջ հայտնաբերել էր Սուլիորովի մասնակցությամբ կազմված հայ-ռուսական դաշնագրի նախագիծը, որտեղ հիշատակված էր

,Հայաստանե անվանումը:

Երբ Ա. Գրիբոեդովը ցարի հաստատման համար Պետերբուրգ էր տարել Թուրքմենչայի պայմանագիրը, Ներսես Աշտարակեցին նրան էր հանձնել Յ. Արղությանի կազմած վերոհիշյալ նախագիծը:

Վերոհիշյալ կոմիտեն հակված է եղել ընդունել ,Երևանի պրովինցիաե անվանումը: Պետերբուրգ հասած Գրիբոեդովը կոմիտեի անդամներին ներկայացրել է Արղությանի կազմած նախագծի պատմությունը:

Նրա փաստարկներն ընդունվել են և 1828 թ. մարտի 21-ին, Թուրքմենչայի պայմանագրի վավերացման հաջորդ օրը, Նիկոլայ Առաջինը ստորագրել է հրամանագիր, որտեղ նշվել էր. ,Պարսկաստանի հետ կնքված դաշնագրի համաձայն հրամայում եմ. Պարսկաստանից Ռուսաստանին միացված Երևանի և Նախիջևանի խանություններն այսուհետև բոլոր գործերում անվանել Հայկական մարզ և մտցնել մեր տիրոջսի մեջ:

Այս հրամանի համաձայն Երևանի ժամանակավոր վարչությունը վերացվել է և ձևավորվել է Հայկական մարզի վարչություն, որը հայերեն թարգմանվել էր ,Հայոց աշխարհե:

Մեծ է Ռուսաստանին Արևելյան Հայաստանի միացման պատմական նշանակությունը:

- Եվ մի շարք ռուս-պարսկական պատերազմներից հետո,- գրել է Յովհ. Թումանյանը 1913 թ. հունվարին,- վերջնականապես 1828 թվին Ռուսաստանը տիրեց Հին Սյունիքը, Գուգարքն ու Արարատյան երկիրը և միանգամ ընդմիշտ վերջ տվեց կոտորածներով, գաղթականություններով ու առևանգումներով հայտնի հայկական հարցին հայոց աշխարհի էս մասում կամ ուրիշ խոսքով՝ պարսկահայկական հարցին: Մնաց տաճկահայկական հարցը(**Յովհաննես Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու, հատոր յոթերորդ, Երևան, 1995, էջ 12):

Հաճախ, առանձին հեղինակներ վիճում են, պնդելով, թե Հայաստանը ոչ թե միացել է Ռուսաստանին, այլ Ռուսաստանը նվաճել է Հայաստանը:

Եթե մենք այդ պատմական իրադարձությանը նայենք պարսիկների աչքերով, այո, ճիշտ է, Ռուսաստանը նրանից նվաճել է Արևելյան Հայաստանը:

Բայց մենք պարտավոր ենք այդ պատմական իրադարձությանը նայել մեր աչքերով, դրան վերաբերել այն ժամանակվա հայերի ցանկությունը գնահատելով: Այդպիսի դեպքում, իհարկե, պատմականորեն ճիշտ է, որ Հայաստանը միացել է

Ռուսաստանին: Այլապես այդ իրադարձությունը չէր ունենա այն բախտորոշ նշանակությունը, որի շնորհիվ.

Առաջին. Միանալով Ռուսաստանին Արևելյան Հայաստանը դարձել է հայ ժողովրդի ազգային համախմբման օջախ:

Երկրորդ. 1827 թ. Արևելյան Հայաստանում բնակվել է ընդամենը 25.151 հայ: Երեք տարի հետո այդ թիվը հասել է ավելի, քան 82 հազարի: Արևելյան Հայաստանի հայ բնակչությունը փրկվել է ֆիզիկական ոչնչացման վտանգից:

Գտնվելով Ռուսաստանի և հետո Սովետական Միության կազմում 1990 թ. Հայաստանում հայ բնակչության թիվը հասել է մոտ չորս միլիոնի: Մեր հազարամյակների պատմության մեջ՝ հիրավի եզակի երևույթ:

Երրորդ. Արևելյան Հայաստանն ընդգրկվել է զարգացման ավելի բարձր աստիճանի վրա կանգնած Ռուսաստանի սոցիալ-տնտեսական, մշակութային պայմանների մեջ:

Չորրորդ. Ռուսաստանի և հետո էլ Սովետական Միության կազմում գտնվելու շնորհիվ, Հայաստանի հողի վրա պատերազմ չի եղել, ոչ մի օտար զավթիչ չի համարձակվել խանգարել հայ ժողովրդի խաղաղ կյանքը: Այդ ընթացքում հայ մարդը հնարավորություն է ունեցել կառուցել ու շենացնել իր երկիրը, ստեղծել բարձր զարգացած արդյունաբերություն, գյուղատնտեսություն, մշակույթ ու գիտություն:

Եվ այս ամբողջը հասկանալու և գնահատելու համար հարկավոր է հիշել Թուրքիայի տիրապետության տակ մնացած Արևմտյան Հայաստանի ճակատագիրը:

Հարկավոր է չմոռանալ, որ օսմանյան Թուրքիան դարեր շարունակ կեղեքել ու հալածել է արևմտահայությանը և իր գործադրած բռնություններն ավարտել է 1915 թ. սկսած հայոց ցեղասպանությամբ, որին զոհ է գնացել մեկ ու կես միլիոն հայ և ամբողջովին հայթափվել է Արևմտյան Հայաստանը:

Ահա, վերջին հաշվով, հայ ժողովրդի ճակատագրում Թուրքիայի և Ռուսաստանի ունեցած դերի պատմական զուգահեռների գլխավոր տարբերությունը:

Ոմանց կողմից չնկատել կամ չհասկանալ այս պատմական իրողությունը, նշանակում է հեռանալ պատմականության սկզբունքներից և, մեղմ ասած, մեր ազգային անվտանգության շահերին չհամապատասխանող դիրքում հայտնվել...

6. ՈՐԻՄ-ԹՈՒՐԵԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՍԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

1828 թ. ապրիլի կեսերին սկսվել է ռուս-թուրքական երկրորդ պատերազմը Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներով, որտեղ ռուսական զորքերը ձեռք են բերել նշանակալի

հաջողություններ, գրավելով բազմաթիվ քաղաքներ, ամրոցներ ու այլ բնակավայրեր:

Հարկ չեմ համարում ներկայացնել ռազմական գործողությունները, միայն կամենում եմ նշել, որ ռուսական զորքերի կազմի մեջ ավելի շատ հայեր էին մտել և ավելի կազմակերպված էին մասնակցում ռազմական գործողություններին, քան Պարսկաստանի դեմ մղված պատերազմի ժամանակ:

Արևմտահայերը Թուրքիայի դեմ Ռուսաստանի պատերազմը դիտում էին որպես թուրքական բռնակալությունից ազատագրվելու միջոց և ռազմական գործողություններին նրանց մասնակցությունը կրում էր համատարած բնույթ: Այդ մասին է վկայում կազմակերպված բազմաթիվ աշխարհագրային ջոկատների գոյությունը:

Հիշատակության արժանի են Բայազետում Մելիք-Մարտիրոսի հրամանատարությամբ գործող 500 հեծյալներից կազմված զինավառ խումբը, Երզրումի թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Կարապետ Բագրատունու նախաձեռնությամբ ստեղծված ջոկատը և շատ ուրիշներ:

Հայկական ջոկատները ռուսական զորամասերի հետ միասին եռանդով մասնակցել են Կարսի, Արդահանի, Երզրումի, Բայազետի, Ալաշկերտի և Արևմտյան Հայաստանի մյուս բնակավայրերի ազատագրմանը:

Մեծ ու անչափելի էր նրանց ուրախությունը, որ վերջապես ազատվել են թուրքական դժոխքից: Եվ այս առումով էլ նրանք իրավացիորեն ռուսական զորքերին ընդունում էին որպես ազատարարների:

Սակայն, ռուսական զորքերի տարած հաղթանակները չէին համապատասխանում Անգլիայի նպատակներին: Հարկավոր էր կասեցնել ռուսական զորքերի հաղթարշավը: Հենց այդ նպատակով էլ Անգլիան փորձել է Պարսկաստանին ներքաշել Ռուսաստանի դեմ նոր պատերազմի մեջ:

Անգլիական գործակալների հրահրմամբ մոլեռանդ ամբոխը 1829 թ. փետրվարի 11-ին հարձակվել է Թեհրանում գտնվող ռուսական դեսպանատան վրա և սպանել է դեսպան Ալեքսանդր Գրիբոեդովին:

Անգլիացիները համոզված էին, որ Գրիբոեդովի սպանությամբ Ռուսաստանը պատերազմ կսկսի Պարսկաստանի դեմ:

Սակայն, պարսից շահը շտապել է Նիկոլայ Առաջինին նվեր ուղարկել հայտնի ,Շահ ավաստե անունով թանկարժեք նվերը, պաշտոնապես ներողություն խնդրելով կատարված ողբերգության համար և պարտավորվել է անհապաղ կատարել Թուրքմենչայի պայմանագրով ստանձնած բոլոր

պարտավորությունները: Նիկոլայ Առաջինը բավարարվել է դրանով և ծախողվել է Անգլիայի մտադրությունը:

Երբ հաղթանակներ տանելով, ռուսական բանակը մոտեցել է Կոստանդնուպոլսին և Սևծովյան նեղուցներին, Անգլիան, Ֆրանսիան և Ավստրիան այլևս չեն թաքցրել իրենց նպատակը՝ պաշտպանել թուրքիային: Նույնիսկ անգլիական ռազմական նավատորմը հրաման էր ստացել՝ հենց որ ռուսական զորքերը շարժվեն Կոստանդնուպոլսի վրա, անհապաղ մտնել նեղուցներ և ռազմական գործողություններ սկսել ռուսական զորքերի դեմ: Ուժի այս ցուցադրության հետ միասին եվրոպական տերությունները սկսել են Ռուսաստանի վրա դիվանագիտական ճնշում գործադրել և հարկադրել նրան արագացնել հաշտության կնքումը, ինչի մասին պարտված թուրքական սուլթանը խնդրել էր Ռուսաստանին:

1829 թ. սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլսում Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվել է 16 հոդվածից բաղկացած հաշտության պայմանագիր:

Պայմանագրի մի շարք հոդվածներ վերաբերել են Բալկանյան երկրներին:

Առանձին հոդվածով Թուրքիան ճանաչել է Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կնքված Գյուլիստանի ու Թուրքմենչայի պայմանագրերով Անդրկովկասի միացումը Ռուսաստանին:

Չնայած պատերազմի ընթացքում ռուսական զորքերը գրավել էին Արևմտյան Հայաստանից Երզրումը, Արդահանը, Բայազետը, Վլաշկետը; Կարսը և այլ բնակավայրեր, սակայն արևմտյան տերությունների և առաջին հերթին Անգլիայի ճնշման ազդեցությամբ Ռուսաստանը հարկադրված է եղել պայմանագրով այդ տարածքները վերադարձնել Թուրքիային:

13-րդ հոդվածում ասվում էր, որ պայմանավորվող կողմերը ,ընդհանուր թողություն և լիակատար ներում են պարգևում իրենց բոլոր, ամեն դիրքի հպատակներին, որոնք պատերազմի ընթացքում...մասնակցել են պատերազմական գործողություններին կամ իրենց վարքով և կարծիքներով դրսևորել են նվիրվածություն երկու պայմանավորվող տերություններից որևէ մեկի նկատմամբ: Ուստի այդ անձանցից ոչ ոք իր նախկին արարքների համար չի ենթարկվի անհանգստության կամ հետապնդումների ոչ իր անձի, ոչ իր գույքի վերաբերմամբ, ավելին նրանցից յուրաքանչյուրին իրավունք է տրվում սորից տեր կանգնելով իր նախկին ունեցվածքին, հանգիստ, օրենքների հովանավորության ներքո, վայելել իր ունեցվածքը, կամ, երկյուղ չկրելով ոչ մի տեսակ նկրտումներից և հալածանքներից, ծախել այն 18 ամսվա ընթացքում, եթե կցանկանա իր ընտանիքով և շարժական

գուլքով հանդերձ սեփական ընտրությամբ վերաբնակվել մյուս տերության հողում:

Բացի դրանից, երկու կողմերի հպատակներին, որոնք բնակվում են Բարձր Դռանը վերադարձվող կամ Ռուսական կայսրության արքունիքին զիջվող մարզերում, տրվում է ` նաև 18-ամսյա ժամանակամիջոց, հաշված սույն հաշտության պայմանագրի վավերացումների փոխանակման օրից, որպեսզի նրանք, եթե հարկավոր համարեն, կարողանան իրենց, պատերազմից առաջ կամ հետո ձեռք բերած, սեփականության վերաբերմամբ անել կարգադրություն, և իրենց դրամագլուխներով ու շարժական գուլքով անցնել պայմանավորվող տերություններից մեկի կամ մյուսի երկիրը(Յայաստանը **և սովետական միջազգային դիվանագիտության և փաստաթղթերում...**, էջ 81):

Այս հողվածի հիման վրա Արևմտյան Յայաստանի այն քաղաքներից ու բնակավայրերից, որոնք պայմանագրով վերադարձվել էին Թուրքիային, հայերը սկսել են զանգվածաբար գաղթել Արևելյան Յայաստան:

Արևմտյան Յայաստանից ընդամենը գաղթել է 14047 ընտանիք` 100 հազար մարդ (**Ա. Երիցեան**, Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք 19-րդ դարում, հ. 1, Թիֆլիս, 1894, էջ 441-442):

1822 թ. Սրբազան դաշինքից Վերոնայի կոնգրեսում քննարկվել է հույն ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի, ինչպես նաև Բալկանյան երկրներում տիրող իրավիճակի հարցը, որն ուղղակիորեն կապված էր Թուրքիայի հետ:

Այդ քննարկման ժամանակ էլ առաջին անգամ միջազգային դիվանագիտության մեջ օգտագործվել է ,Արևելյան հարցե արտահայտությունը:

Յետագայում եվրոպական տերությունների, Ռուսաստանի քաղաքականությունն ուղղված էր Թուրքիայի տիրապետության տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդներին պաշտպանելու միջոցով իրենց շահերի լուծմանը: Եվ Թուրքիայում իրենց շահերի ամրապնդման համար այդ տերությունների մղած դիվանագիտական պայքարը պատմության մեջ հայտնի է դարձել ,Արևելյան հարցե անունով:

1829 թ. սեպտեմբերին Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված հաշտության պայմանագրով Արևմտյան Յայաստանի հարցը նույնպես մտել է դիվանագիտության ոլորտ: Ճիշտ է, այդ պայմանագիրը ստորագրվել է երկու տերությունների միջև, բայց դրա կնքման մեջ թեյադրող դեր են խաղացել եվրոպական տերությունները և առաջին հերթին, Անգլիան, որոնց ուղղակի ճնշմամբ Ռուսաստանը հարկադրված է եղել Թուրքիային զիջել

իր կողմից գրաված Արևմտյան Հայաստանի տարածքը:

Ադրիանապոլսի պայմանագրով Ռուսաստանը չի հասել իր նպատակին՝ իր տիրապետության տակ պահել պատերազմի արդյունքով Թուրքիայից գրաված Արևմտյան Հայաստանը: Դրա հետ միասին եվրոպական տերությունների պնդմամբ Արևմտյան Հայաստանի հայ բնակչության մեծ մասը մնացել է թուրքական տիրապետության տակ:

Այսպիսով, Ադրիանապոլսի պայմանագրով Արևմտյան Հայաստանն ու նրա հայ բնակչությունը մնացել են թուրքական տիրապետության տակ, որի արդյունքով էլ միջազգային դիվանագիտության մեջ առաջացել է Հայկական հարցը, որպես Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս:

- Հայկական հարցը,- գրել է Հովհ. Թումանյանը 1913 թ. հունվարին,- վայրենի կոտորածների և կեղեքումների հարց է, հալածանքների ու գաղթականությունների հարց է, նա գերազանցորեն ֆիզիկական գոյության խնդիր է: Եվ նրա հաջողությունը միշտ կապված է եղել Ռուսաստանի հաջողության հետ: **Ով վեր է կացել Ռուսաստանի հաջողության դեմ, վեր է կացել հայկական հարցի հաջողության դեմ, և ով Ռուսաստանի դեմ պաշտպանել է Տաճկաստանին, նա մեղսակից է տաճկական զազանություններին ու հայկական սարսափներին**(ընդգծումն իմն է-Վ.Պ.):


Նա պատասխանատու է հայ ժողովրդի ծով արյան ու մարդկության պատմության առաջ: Եվ տեղ չկա խուսափելուե(Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր յոթերորդ, Երևան, 1995, էջ 15-16):

Նշելով Թուրքմենչայի պայմանագրի 190-ամյակը, մենք պարտավոր ենք 21-րդ դարի բարձունքից հետադարձ հայացք նետել դրա հետ կապված իրադարձությունների վրա և պատշաճորեն գնահատել հայ ժողովրդի պատմական ճակատագրի համար ունեցած անգնահատելի նշանակությունը:

Armenia in the ancient geographical sources

Ed. Baghdasarian

Relatively a lot of findings were discovered during excavations in Babylonia and other countries of Mesopotamia, where clay tiles or tablets served as a material for writing, and acquired incomparable durability after backing.



The oldest finds, dating back to 2400-2200 BC, with a schematic picture of Mesopotamia represent the river, flowing along the valley, between two mountain countries; before emptying into the sea, the river forms a delta, the situation of the countries is indicated by means of circles.

Among engineering **maps** saved, there is a piece plate with plan Nippura city in Mesopotamia, which represents the walls and gates of the city, the most important buildings, canals and other facilities.

There are also isolated images, reproducing speculative presentation of ancient people about structure and boundaries of the world. Among them there is a Babylonian tablet of 6th century BC, accompanied by the text. It depicts the Earth as a flat circle, washed by Ocean, named “Bitter River”. Mountains, which descend to the river Euphrates, are situated in the north. Gulf (Persian) extends deep into the land. Babylon is placed in the center of the Earth. Assyria is represented to the north-east of Babylon, in the north adjoining with the country Urartu (Armenia). In addition to Babylon several other cities are also indicated on the **map** by oval mark. Behind the Ocean lie seven islands, symbolizing the unknown world. The concept of the world in the form of disk, surrounded by ocean, with the public or religious center of the country, was widespread and even appeared on **maps** of the early Middle Ages¹.

¹ - <https://mapstor.com/articles/history-of-cartography.html>

Tabula Peutingeriana (Peutinger map)



Drawn in 1265 by a monk from Colmar and made up of 11 parchment scrolls measuring approximately 34 cm high by 6,74 m. long when assembled, this document was discovered in 1494 by Konrad Meissel, alias Celtes, and given in 1507 to an Antiquarian of Augsburg, Konrad Peutinger. The map is a copy of the Roman original, and covers Europe (without the Iberian Peninsula and the British Isles), North Africa, and parts of Asia (including the Middle East, Persia, and India). The original map which the surviving copy is based on is thought to date to the 4th or 5th century and was itself based on a map prepared by Agrippa during the reign of the emperor Augustus (27 BC – AD 14).

The map was discovered in a library in the city of Worms by German scholar Conrad Celtes in 1494, who was unable to publish his find before his death and bequeathed the map in 1508 to Konrad Peutinger, a German humanist and antiquarian in Augsburg, after whom the map is named. The Peutinger family kept possession of the map for more than two hundred years until it was sold in 1714. It then bounced between several royal and elite families until it was purchased by Prince Eugene of Savoy for 100 ducats; upon his death in 1737, it was purchased for the Habsburg Imperial Court Library in Vienna (Hofbibliothek). It is today conserved at the Austrian National Library at the Hofburg palace in Vienna.

In the map Armenia is located to the north of the Mesopotamia, near Media. The names of Armenian cities that can be recognized are Tigranokerta (Tigranakert), Artaxata (Artashat), Raugona (probably Bagrewan) and Vastauna (Possibly Vostan).

The major roads of Ancient Armenia on Peutingerian map is presented in the next section.



The World Map of Eratosthenes, reconstructed by von Spruner in 1855 is dated around the third century BCE. The three continents are shown named Europe, Asia and Libya. Armenia is placed in the middle of the world, just south of the Caspian and Black Seas.

The name of Armenia appears in many of the Greco-Roman geographical and historical texts and books. The Greek philosopher and geographer Eratosthenes (c. 276–194 BC) accepting the existing theory of the earth being spherical, suggested that it was the center of the universe and all the celestial bodies revolved daily around it. His world map includes the country of Armenia².

Among European travelers, who in 25 BC crossed the Mare Nostrum (Mediterranean Sea) to visit Alexandria, was a young man named Strabo. Born in Amasia, the capital of the former kingdom of Pontus, he was a very important figure in the history of cartography.

Strabo (c. 63 BC – 24 CE) was one of the giants of geography. His Geography volumes were completed in the second decade of our era, containing almost everything known about geography and cartography during his time. Strabo's description of Armenia occupies many pages of description of the land and its people and includes over 60 references to this country.

Almost everything we know about Greek cartography up to Claudius Ptolemy (150 AD), originates in the writings of Strabo.

²- R. Galchian, A Brief History of the Maps of Armenia, Journal of Armenian Studies, Armenian National Academy of Sciences, Yerevan, 2013 , pp. 83-107.

Strabo's description of Armenia occupies many pages of description of the land and its people and includes over 60 references to this country.

Some world-famous cartographers have prepared maps of the world according to the descriptions provided by Strabo, which invariably include Armenia, located north of Mesopotamia and south of the Caucasus.



Title page from Isaac Casaubon's 1620 edition of *Geographica*

Strabo takes in history and in this story a strange place. It is doubtful that he has made at least some personal contribution to the treasury of human knowledge; hardly in his life he has made at least one map. But the "Geography" of Strabo - work in 17 books - is the main key to the history of ancient cartography, simply because this manuscript survived and was published, while most other works and maps were lost or destroyed.

Claudius Ptolemaeus of Alexandria, or Ptolemy as he is generally known (c. 90-168 CE) was the most important figure in geography and cartography of the old world, whose books and maps were used extensively well into the sixteenth century. (Source: University of Florida George A. Smathers Libraries: Holy Land maps).



1st Map of Asia Bithynia & Pontus, Asia, Lycia, Pamphylia, Galatia, Cappadocia, Cilicia, & Lesser Armenia (Armenia minor)



[3rd Map of Asia Colchis, Iberia, Albania, Greater Armenia](#)

The name of Armenia is always present on the maps of the Christian era since it was the first and only Christian country east of Asia Minor – Anatolia. In Christian cartography Armenia is frequently identified with Mount Ararat and Noah's Arc, as per the biblical account of the Flood. In some maps the Garden of Eden or Terrestrial Paradise is shown inside or adjacent to Armenia.

The oldest Roman map is the 'Peutinger Map', the archetype of which dates from the middle of the first century CE. This is a road map is some 34 cm wide and 6.4 metres long, a fifth-century copy of which has survived. The map shows various routes radiating from Rome to the four corners of the empire, including Armenia, where the names of Artashat, Bagrewan (misspelled Raugona), Vostan (Van) and Tigranakert are recognizable.

With the coming of Christianity and religious fervour, especially under the influence of the Biblical theory of the Creation, the western science of cartography suffered immensely and there was no advance at all in the field from the second to the fifteenth century CE, except for cosmetic modifications and representations. In the western Christian world during this period all the old theories and scientific works were pushed aside and were replaced with new 'facts' based on the teachings of the scriptures.

Since the sixth century the spherical earth was replaced by a flat disc-shaped one, divided into three continents and surrounded by the oceans. This was adopted by Isidore of Seville (c. 560–636), who included the T-O map of the world (see below) in his *Etymologiae*. This type of maps appeared in hundreds of manuscripts and, with some modifications, formed the backbone of the Christian cartography for almost 1000 years.

